ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/58

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.05.2018թ. թիվ 03/26-3/8704-18 գրությամբ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.05.2018թ. թիվ ԴՎԱ/1675 գրության հիման վրա, 15.05.2018թ. թիվ 03/26-3/8704-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.</u>**

«Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.05.2018թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով մրցույթում 1-ին չափաբաժնի մասով «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: 05.05.2018թ. «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի «megapolistrade2017@gmail.com» էլեկտրոնային հասցեին ծանուցվել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով մրցույթի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է: Մերժման հիմքը եղել է այն, որ 3 օրյա ժամկետում չեն ներկայացվել որակավորման փաստաթղթերը, այսինքն՝ հավելված 6 և 6.1-ը:

Մերժման ծանուցումը ստանալու օրը՝ 05.05.2018թ., «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Վահե Դաքեսյանը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով մրցույթի համակարգող Տ. Բաղդասարյանից պարզել է, որ վերջինս megapolistrade2017@gmail.com էլեկտրոնային հասցեին 03.04.2018թ. ծանուցել է, որ որպեսզի 3 օրյա ժամկետում ներկայացվեն որակավորման փաստաթղթերը:

Ընկերությունը հայտնել է, որ «megapolistrade2017@gmail.com» էլեկտրոնային հասցեին չի եկել վերոնշյալ ծանուցումը, ոչ inbox բաժնում, ոչ spam բաժնում: Ընկերությունը խնդրել է հաշվի առնել, որ պատվիրատուի կողմից ուղարկված էլեկտրոնային ծանուցումը, որը պատվիրատուի մոտ ցույց է տալիս որպես ուղարկված, դեռևս չի նշանակում, որ ստացվել է մասնակցի կողմից: Բավականին շատ տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր է, որ էլեկտրոնային նամակը պատվիրատուի մոտից դուրս գա հասցեագրված մասնակցին՝ ցույց տալով, որ հասել է, բայց նամակը չհասնի ուղարկված էլեկտրոնային հասցեին: Gmail համակարգը հաճախ է խնդիրներ ունենում Microsoft outlook համակարգի հետ, իսկ պատվիրատուի մոտ համակարգը աշխատում է Microsoft outlook-ով, որը կցված է armeps համակարգին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/58 ընթացակարգի շրջանակներում 17.05.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել

է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.05.2018թ. թիվ ԴՎԱ/1675 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգում «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով Ընկերությանը armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/58 ընթացակարգի շրջանակներում 17.05.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով

հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով 03.04.2018թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության կողմից Gmail համակարգին ուղղված հարցման պատասխանը, որի համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ուղարկված ոչ ավտոմատ ծանուցումը բացակայում է «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի «megapolistrade2017@gmail.com» էլեկտրոնային հասցեում մուտք եղած նամակների ցանկում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.05.2018թ. թիվ 03/26-3/8704-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.05.2018թ. թիվ ԴՎԱ/1675 գրությունը և կից

փաստաթղթերը, «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի 17.05.2018թ. և 11.06.2018թ. գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում

էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հավելվածով Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով

նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով 03.04.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը:

«Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 11.06.2018թ. ներկայացրել է Ընկերության կողմից Gmail համակարգին ուղղված հարցման պատասխանը, որն իրենից ենթադրում է 03.04.2018-06.04.2018թթ. ընկած ժամանակահատվածում «info@armeps.am» համակարգից ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընկերության «megapolistrade2017@gmail.com» էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակների ցանկը:

Այսպիսով՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 23/26-21[1232495] գրության՝ Պատվիրատուի կողմից «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին «Armeps» էլեկտրոնային համակարգից ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 03.04.2018թ. ժամը 15:05-ին ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Gmail համակարգից ստացված տեղեկատվության ուսումնասիրությունից և Ընկերության էլեկտրոնային հասցեում առկա տվյալների հետ համադրումից պարզվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ուղարկված ոչ ավտոմատ ծանուցումը բացակայում է «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի «megapolistrade2017@gmail.com» էլեկտրոնային հասցեում մուտք եղած նամակների ցանկում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո, Ընթացակարգի քարտուղարի կողմից Armeps համակարգի միջոցով ուղարկված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը, համաձայն Gmail համակարգի կողմից տրամադրված տեղեկատվության, չի ստացել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը չկատարելը պայմանավորված է եղել Ընկերության կամքից անկախ պատճառներով, քանի որ Ընկերության կողմից չի ստացվել համապատասխան ծանուցումը, որի հետևանքով և Ընկերությունը տեղեկացված չի եղել Ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պարտավորության ծագման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.05.2018թ. թիվ 03/26-3/8704-18 գրությամբ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00166341) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ